

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-ԻՆ
ԺԱՄԸ 15:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՍՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին`**

Խորհրդի անդամներ`

Ս. Վարդանյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Տ. Դավթյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Կ. Կարապետյան	Երևանի քաղաքապետ
Ե. Ջախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ
Կ. Մինասյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Լ. Հակոբյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Հրավիրվածներ`

Ա. Մարտիրոսյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Ա. Նոանյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Գ. Մուրադյան	ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տե- ղակալ
Ա. Ջանջուղազյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձա- պետ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսա- գիտական վարչության պետ

Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Կ. Բաղայան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Ա. Առաքելյան	Երևանի քաղաքապետի խորհրդական
Ա. Բաղայան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ
Հ. Ավետիսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ներդրումային քաղաքականության վարչության պետ

1. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. Ծրագիր 1» (ծրագիր) (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակում մշակված ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ ամրապնդման խորհրդատուի տեխնիկական առաջադրանքի (TOR) շրջանակի և մրցույթի հետաքրքրության հայտ (EOI) ներկայացնելու հայտարարությունը հաստատելու մասին

(Ա. Առաքելյան, Կ. Մինասյան, Ն. Երիցյան, Մ. Վարդանյան, Կ. Կարապետյան,
Ա. Նոանյան, Տ. Սարգսյան)

8. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. Ծրագիր 1» (ծրագիր) (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակում մշակված ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ ամրապնդման խորհրդատուի տեխնիկական առաջադրանքի (TOR) շրջանակի (նախնականն է, որով ներգրավվելու են մրցույթին մասնակցելու հետաքրքրության հայտերը) և մրցույթի հետաքրքրության հայտ (EOI) ներկայացնելու հայտարարությունը՝ հաշվի առնելով նիստում արված դիտողություններն ու առաջարկությունները.

2) հանձնարարել ծրագրի իրականացման պատասխանատուներին մեկամսյա ժամկետում հստակեցնել և վերջնական տեսքի բերել սույն արձանագրության 8-րդ կետի 1-ին ենթակետում նշված առաջադրանքի (TOR) նախնական տարբերակը.

3) ընդունել ի գիտություն, որ ԱԶԲ-ի հետ բանակցային գործընթացում, որպես գերակայություն, առաջնահերթ է համարվում տարածքային համաչափ զարգացումը:

2. «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. ծրագիր 1» (ծրագիր) (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակում մշակված ծրագրի համապատասխան անկախ մոնիթորինգային կազմակերպության ներգրավման տեխնիկական առաջադրանքի (TOR) շրջանակի և մրցույթի հետաքրքրության հայտ (EOI) ներկայացնելու հայտարարությունը հաստատելու մասին

(Կ. Բաղայան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր. Ծրագիր 1» (ծրագիր) (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակում մշակված ծրագրի համապատասխան անկախ մոնիթորինգային կազմակերպության ներգրավման տեխնիկական առաջադրանքի (TOR) շրջանակի և մրցույթի հետաքրքրության հայտ (EOI) ներկայացնելու հայտարարությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ